

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՏՐՎԱԿՈՎ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄ, ԹԵ՞ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱԿՈՒՂԻ

ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» 30. 04. 2008 թ. ՀՀ օրենքով (ՀՕ-49-Ն) ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 178 հոդվածի 2-րդ մասը լրացվեց 5-րդ կետով, որով որպես խարդախության ծանրացուցիչ հանգամանք նախատեսվեց խարդախության կատարումը կաշառք ստանալու պատրվակով: Նշված օրենքի նախագծին կցված տեղեկանք-հիմնավորման մեջ այդ լրացումը հիմնավորվել է հետևյալ կերպ. «Պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ ապօրինի վարձատրություն (կաշառք) տվողի օգտին ցանկալի գործողություններ կատարելու կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալու նպատակով ապօրինի վարձատրություն (կաշառք) ստացող անձը ո՛չ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 308 հոդվածով սահմանված պաշտոնատար անձ է և ո՛չ էլ պետական ծառայող: Այդպիսի պայմաններում նրա գործողությունները որակվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178 հոդվածով՝ որպես խարդախություն, և փաստացի «կաշառք» ստացող նման անձինք մեղմ պատիժներ են ստանում, չնայած այն հանգամանքին, որ նման գործողություններով ոտնձգվում է ոչ միայն ուրիշի գույքը, այլ ոտնահարվում է նաև պետական իշխանության հեղինակությունը»¹:

Այն, որ խաբեությանը որպես պաշտոնատար անձ ներկայացած և կաշառք ստանալու պատրվակով ուրիշի գույքին տիրացած մասնավոր անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել կաշառք ստանալու համար, բխում է հատուկ սուբյեկտով հանցագործությունների որակման կանոններից: Մասնավորապես, եթե հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձն իր նախաձեռնությամբ իրականացրել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը, ապա նա կարող է պատասխանատվության ենթարկվել միայն ընդհանուր սուբյեկտով այնպիսի հանցագործության համար, որի օբյեկտիվ կողմը նույնանում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի հետ: Դրանից ելնելով՝ նման արարքները պրակտիկայում որակվում են որպես խարդախություն:

Ընդ որում, քրեական իրավունքի տեսության մեջ և քրեական օրենսդրության պաշտոնական պարզաբանումներում ընդունված մոտեցման համաձայն՝ խարդախություն պետք է որակել նաև

¹ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2659&Reading=0>:

- այն պաշտոնատար անձի արարքը, ով ի սկզբանե մտադրություն չունենալով իր լիազորությունների օգտագործմամբ որևէ գործողություն կատարել անձի օգտին կամ չունենալով այդպիսի գործողություն կատարելու օբյեկտիվ հնարավորություն, կաշառքի պատրվակով նրանից ստանում է նյութական արժեքներ և տիրանում դրանց,

- այն մասնավոր անձի արարքը, ով իրականացնում է կաշառքի «կարծեցյալ միջնորդություն» և խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով տիրանում է կաշառքի առարկային:

Այսպես, ՌԴ գերագույն դատարանի պլենումը «Կաշառակերության և առևտրային կաշառքի վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» 2000 թ. փետրվարի 10-ի № 6 որոշման մեջ նշել է. «Պաշտոնատար անձի կամ առևտրային կամ այլ կազմակերպությունում կարգադրիչ գործառույթներ իրականացնող անձի կողմից դրամ, արժեթղթեր կամ այլ նյութական արժեքներ ստանալը՝ իբր այնպիսի գործողության կամ անգործության համար, որը նա ի վիճակի չէ կատարել ծառայողական լիազորությունների բացակայության կամ պաշտոնական դիրքը օգտագործելու անհնարինության պատճառով, և եթե դա կատարվել է նշված նյութական արժեքներին տիրանալու նպատակով, պետք է որակել որպես խարդախություն: Նման դեպքերում նյութական արժեքների սեփականատերը պետք է պատասխանատվության ենթարկվի կաշառք տալու փորձի կամ առևտրային կաշառք տալու փորձի համար»²: Նույն որոշման համաձայն՝ «Եթե անձը որևէ մեկից ստանում է դրամ կամ այլ նյութական արժեքներ՝ դրանք որպես կաշառք կամ առևտրային կաշառք պաշտոնատար անձին կամ առևտրային կամ այլ կազմակերպությունում կարգադրիչ գործառույթներ իրականացնող անձին հանձնելու պատրվակով, և, մտադրություն չունենալով դա անել, տիրանում է դրանց, ապա կատարվածը պետք է որակել որպես խարդախություն: Նյութական արժեքների սեփականատիրոջ արարքը պետք է որակել որպես կաշառք տալու փորձ կամ առևտրային կաշառք տալու փորձ»³:

Բ. Վ. Կորոբեյնիկինը և Ս. Ֆ. Օրլովը «կարծեցյալ միջնորդի» արարքում խարդախության հանցակազմի առկայությունը հիմնավորում են հետևյալ կերպ՝ եթե «կարծեցյալ միջնորդը» տիրանում է ուրիշի նյութական արժեքներին՝ դրանք որպես կաշառք պաշտոնատար անձին փոխանցելու պատրվակով, ապա միջնորդի դիտավորության ուղղվածությունը, հանցագործության օբյեկտիվ կողմի հիմնական բովանդակությունը (խաբեությունը), ինչպես նաև ոտնձգության օբյեկտը՝ սեփականության իրավունքը, վկայում են այն մասին, որ առկա է ոչ թե պետական ծառայության, այլ սեփականության դեմ ուղղված հանցագործություն՝ խարդախություն⁴:

Սակայն կարծում ենք, որ կաշառք ստանալու կամ կաշառքի միջնորդության պատրվակով կաշառքի առարկան խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ստանալը չպետք է որակել խարդախու-

² Постановление Пленума Верховного Суда РФ от 10 февраля 2000 г. № 6 "О судебной практике по делам о взяточничестве и коммерческом подкупе", пункт 20.

³ Նույն տեղում, 21-րդ կետ:

⁴ Стен Коробейников Б., Орлов М. Ответственность за взяточничество // «Советская юстиция», 1970, № 20, էջ 20:

թյուն: Նման որակման պարագայում իրավակիրառողը հայտնվում է իրավական փակուղու առջև այն հարցի առնչությամբ, թե արդյոք կաշառքի առարկան պետք է վերադարձվի կաշառք տված անձին:

Մի կողմից, եթե արարքը որակվում է խարդախություն, ապա դրա կատարմամբ գույքային վնաս կրած անձը պետք է ճանաչվի տուժող (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ քր. դատ. օր.) 58 հոդվածի 1-ին մաս): Իսկ քր. դատ. օր.-ի 59 հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ տուժողն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ստանալու քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցումը: Տուժողի նշված իրավունքի սահմանափակման որևէ իրավական հիմք գոյություն չունի: Քր. դատ. օր.-ի 119 հոդվածի («Քրեական գործով վարույթն ավարտելիս իրեղեն ապացույցների մասին ընդունվող որոշումները») 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դրանք, այլ արժեքները և մյուս առարկաները, որոնք օրինական տիրապետումից դուրս են եկել հանցագործության կամ օրենքով չթույլատրված այլ գործողությունների հետևանքով, հանձնվում են տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին:

Սակայն մյուս կողմից էլ որպես կաշառք տրված նյութական արժեքները միաժամանակ երկու հանցագործության՝ խարդախության և կաշառք տալու առարկա են: Չէ՞ որ կաշառքի առարկան անձի տիրապետումից դուրս է գալիս ոչ միայն հանցավորի (խարդախի), այլև հենց այդ անձի (սեփականատիրոջ) հանցավոր գործողությունների հետևանքով: Ստացվում է, որ փաստացի հանցանք (կաշառք տալու փորձ) կատարած անձը հավակնում է իր իսկ կատարած հանցագործության առարկան վերադարձնելուն: Սակայն քր. օր.-ի 55 հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից»:

Կարծում ենք, ամբողջ խնդիրը այն է, որ կաշառք ստանալու կամ կաշառքի միջնորդության պատրվակով կաշառքի առարկան խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ստանալու դեպքում ի սկզբանե բացակայում է խարդախության հանցակազմը, մասնավորապես՝ հանցագործության օբյեկտը:

Գտնում ենք, որ հարցն անհրաժեշտ է դիտարկել քրեական իրավունքի խնդիրների տեսանկյունից: Ինչպես իրավագիտորեն նշում է Բ. Տ. Ռազ-

գիլդիւնը, առանց քրեական իրավունքի խնդիրները որոշակիացնելու անհնար է ձևավորել արդյունավետ քրեաիրավական քաղաքականություն⁵:

Քրեական իրավունքի սոցիալական արժեքավորությունը նախ և առաջ հասարակական հարաբերությունների պաշտպանության մեջ է⁶: Քրեական իրավունքի խնդիրը հասարակական հարաբերությունների **որոշակի** շրջանակի պաշտպանությունն է⁷ (ընդգծումը մերն է - Մ. Մ.): Պետք է գերազնահատել քրեական իրավունքի պաշտպանիչ գործառույթը. անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանությունը պետք է սահմանափակված լինի որոշակի շրջանակներով և ունենա իր սահմանները:

Իսկ ի՞նչ սահմաններում պետք է իրականացվի քրեական իրավունքի պաշտպանիչ գործառույթը: Իրավունքի տեսության մեջ իրավունքի գործառույթ ասելով հասկացվում է իրավունքի սոցիալական կոչումը, հասարակական հարաբերությունների վրա իրավական ներգործության ուղղությունը⁸: Ակնհայտ է, որ հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանության շրջանակները պետք է սահմանափակվեն այդ հարաբերությունների մասնակիցների միայն **օրինական** շահերի պաշտպանությամբ: Այսպես, քր. օր.-ի Չատուկ մասի մի շարք հոդվածներում (143, 148, 214, 308, 309 և այլն) որպես հանրորեն վտանգավոր հետևանք նախատեսված է անձի, հասարակության, պետության **օրինական** շահերին պատճառված վնասը:

Կարծում ենք, որ անձի խախտված շահը չի կարող համարվել օրինական, եթե խախտումը անմիջական կապ ունի տվյալ անձի կողմից հանցավոր արարքի կատարման հետ: Եթե անձը կաշառք է տալիս՝ փորձելով նման եղանակով բավարարել իր ապօրինի շահերը և սեփական գույքն իր տիրապետումից դուրս է բերում իր իսկ հանցավոր գործողություններով, ապա այդ գույքի շուրջ այլևս չի կարող ձևավորվել քրեաիրավական պաշտպանության ենթակա հասարակական հարաբերություն: Չետևաբար, կաշառք ստանալու կամ կաշառքի միջնորդության պատրվակով անձի գույքին խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով տիրանալու պարագայում խարդախության օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերությունները չեն վնասվում, ուստի խարդախության հանցակազմը բացակայում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել **օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող** ցանկացած գործողություն (ընդգծումը մերն է - Մ. Մ.), այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ

⁵ Տե՛ս **Разгильдиев Б. Т.** Задачи уголовного права Российской Федерации и их реализация. Саратов, 1993, էջ 4:

⁶ Տե՛ս **Козаченко И. Я.** Уголовное право как основной инструмент уголовно-правового регулирования // «Уголовное право. Общая часть». М., 1997, էջ 18:

⁷ Տե՛ս **Разгильдиев Б. Т.**, նշվ. աշխ., էջ 43:

⁸ Տե՛ս **Радько Т. Н.** Функции права // «Общая теория права». Нижний Новгород, 1993, էջ 267:

գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով»: Քննարկվող իրավիճակում անձի ապօրինի վարքագիծը չի կարող արդարացվել նրանով, որ նա գործում է խաբեության ազդեցության տակ և գտնվում է մոլորության մեջ, քանզի դա **բարեխիղճ** մոլորություն չէ, քանի որ նա գիտակցում է իր արարքի հանցավոր լինելը:

Քննարկվող հարցի առնչությամբ անչափ կարևոր նշանակություն ունի ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թ. փետրվարի 24-ի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը: Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարել է վճռաբեկ բողոքը, բեկանել քր. օր.-ի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռն ու այն անփոփոխ թողնելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը և կարճել է քրեական գործի վարույթը հանցակազմի բացակայության հիմքով: Վճռաբեկ դատարանի նշված որոշման մեջ արված եզրահանգումներից մեկը հետևյալն է. «... պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրություն և հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն»⁹:

Եթե, ըստ վճռաբեկ դատարանի դիրքորոշման, պետությունը պարտավոր չէ հանրային միջոցներ ծախսելով իրականացնել քաղաքացիական օրենսդրությունը խախտած անձանց գույքային շահերի քրեաիրավական պաշտպանություն, ապա այդպիսի պաշտպանությունն առավել ևս չպետք է տարածվի այն անձանց վրա, ովքեր իրենց շահերը փորձել են բավարարել քրեական օրենսդրության խախտմամբ:

Կարծում ենք, որ պետության քրեաիրավական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ թե կաշառք ստանալու կամ կաշառքի միջնորդության պատրվակով խաբված անձի գույքային շահերի, այլ պետության հեղինակության պաշտպանությանը: Այսինքն՝ անհրաժեշտ է վերանայել տվյալ ոտնձգության օբյեկտը, և կաշառք ստանալու կամ կաշառքի միջնորդության պատրվակով կաշառքի առարկային խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով տիրանալը նախատեսել որպես առանձին հանցագործություն:

Տեսականորեն հնարավոր են կաշառք ստանալու կամ կաշառքի միջնորդության պատրվակով կաշառքի առարկան խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ստանալու հետևյալ տարբերակները.

1. Պաշտոնատար անձը կաշառք ստանալու պատրվակով անձամբ կամ միջնորդի միջոցով խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ստանում է դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն:

2. Առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողը առևտրային կաշառք ստանալու պատրվակով անձամբ կամ միջնորդի միջոցով խա-

⁹ ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թ. փետրվարի 24-ի որոշումը քրեական գործ թիվ ԵԿԴ/0176/01/09 մասին, 31-րդ կետ:

բեռքայան կամ վստահությունը չարաշահելու եղանակով ստանում է դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն:

3. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողը ապօրինի վարձատրություն ստանալու պատրվակով անձամբ կամ միջնորդի միջոցով խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ստանում է դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն:

4. Մասնավոր անձը իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելու պատրվակով անձամբ կամ միջնորդի միջոցով խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ստանում է դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն:

5. Մասնավոր անձը խաբեությամբ ներկայանում է որպես առևտրային կամ այլ կազմակերպության ծառայող, պաշտոնատար անձ կամ այդպիսին չհանդիսացող հանրային ծառայող և, համապատասխանաբար, առևտրային կաշառք, կաշառք կամ ապօրինի վարձատրություն ստանալու պատրվակով անձամբ կամ միջնորդի միջոցով ստանում է դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն:

6. Մասնավոր անձը առևտրային կաշառքի, կաշառքի կամ ապօրինի վարձատրության միջնորդության պատրվակով խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով տիրանում է դրամին, գույքին կամ արժեթղթերին:

Նշված արարքների քրեականացման պահանջումները հիմնավորվում է հետևյալ փաստարկներով: Այդ արարքների կատարմամբ վնաս է պատճառվում մի դեպքում պետական իշխանության մարմինների հեղինակությանը, իսկ մյուս դեպքում՝ առևտրային կամ այլ կազմակերպությունների գործարար համբավին: Ոտնձգության հանրային վտանգավորությունը ձևավորող գործոններ են եղանակը՝ խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը, և շարժառիթը՝ շահադիտական դրդումները: Պրակտիկայում նշված արարքների հարաբերական տարածվածության մասին նշվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» 30. 04. 2008 թ. ՀՀ օրենքի նախագծին կցված տեղեկանք-հիմնավորման մեջ¹⁰:

Նշված արարքների քրեականացման թույլատրելիությունը հիմնավորվում է նրանով, որ այդ արարքները քր. օր.-ով նախատեսված որևէ հանցագործության մասնակի դրսևորում չեն, ոչ էլ տվյալ հանցագործությանը հանցակցության տեսակ կամ կատարման փուլ:

Այսպես, տեսականորեն հնարավոր վերոնշյալ տարբերակներից առաջինում պաշտոնատար անձի արարքը չի կարող որակվել քր. օր.-ի 311 հոդվածով, քանի որ նա ի սկզբանե մտադիր չէր կատարել այն գործողությունը կամ անգործությունը, որի համար տրվում է կաշառքը: Այսինքն՝ բացակայում է կաշառք ստանալու սուբյեկտիվ կողմը: Նույն տրամաբանությամբ երկրորդ, երրորդ և չորրորդ տարբերակներում բացակայում է

¹⁰ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2659&Reading=0>:

համապատասխանաբար՝ քր. օր.-ի 200, 311.1 և 311.2 հոդվածներով նախատեսված հանցագործությունների սուբյեկտիվ կողմը: Հինգերորդ տարբերակում բացակայում է համապատասխանաբար՝ քր. օր.-ի 200, 311 և 311.1 հոդվածներով նախատեսված հանցագործությունների սուբյեկտը: Հինգերորդ տարբերակում նկարագրված արարքը չի կարող որակվել նաև քր. օր.-ի 317 հոդվածով («Պաշտոնատար անձի կոչումը կամ իշխանությունն ինքնակամ յուրացնելը»), քանի որ պաշտոնատար անձի կոչումը կամ իշխանությունն ինքնակամ յուրացնելը քրեորեն պատժելի է միայն այն դեպքում, երբ դա զուգորդվել է դրա հիման վրա հանցանք կատարելով: Իսկ քննարկվող իրավիճակում մասնավոր անձի կողմից կաշառքի առարկան խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ստանալը ինքնուրույն հանցակազմ չի պարունակում:

Ինչ վերաբերում է վեցերորդ տարբերակին («կարծեցյալ միջնորդության» դեպքերին), ապա այն առավել մանրամասն քննարկման կարիք ունի: ԽՍՀՄ գերագույն դատարանի պլենումի 1948 թ. հունիսի 24-ի որոշման համաձայն, եթե անձը մեկ ուրիշի մեջ հարուցում է կաշառք տալու մտադրություն և վերջինիցս վերցնում է կաշառքի առարկան՝ իբր պաշտոնատար անձին հանձնելու պատրվակով, որից հետո յուրացնում է այն, պետք է պատասխանատվության ենթարկվի կաշառք տալուն դրդելու համար¹¹: Համանման պարզաբանումներ են տրվել նաև ԽՍՀՄ գերագույն դատարանի 1962 թ. հուլիսի 31-ի¹² և 1977 թ. սեպտեմբերի 23-ի որոշումներում¹³: Բ. Վ. Ջորավոմիսլովի կարծիքով, «կարծեցյալ միջնորդը» պետք է պատասխանատվության ենթարկվի ոչ թե կաշառք տալուն դրդելու, այլ կաշառք տալու փորձին դրդելու համար, քանի որ կաշառք տվողը պատասխանատվության է ենթարկվում հենց կաշառք տալու փորձի համար¹⁴: Իսկ եթե կաշառք տալու նախաձեռնությունը բխում է կաշառք տվողից, ապա, ըստ Ա. Պինակի, «կարծեցյալ միջնորդի» արարքը պետք է որակել որպես կաշառք տալու օժանդակություն¹⁵: Ըստ հեղինակի՝ քննարկվող դեպքում օժանդակությունը այն է, որ կարծեցյալ միջնորդը խոչընդոտներ է վերացնում՝ կաշառք տվողին հնարավորություն տալով կատարելու հանցագործություն¹⁶:

Սակայն այս մոտեցումներին դժվար է համաձայնել, քանի որ «կարծեցյալ միջնորդության» դեպքում բացակայում են կաշառք տալուն հանցակցելու թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ հատկանիշները: Մասնավորապես, բացակայում են հանցակցության՝ համատեղության և դիտավորյալ մասնակցության հատկանիշները: Հանցակցության համատեղությունը նշանակում է, որ հանցակիցներից յուրաքանչյուրի արարքը պետք է ուղղ-

¹¹ Стѣс Сборник действующих постановлений Пленума Верховного Суда СССР 1924-1952 гг. М., 1952, тѣс 26:

¹² Стѣс Бюллетень Верховного суда СССР, 1962, № 5:

¹³ Стѣс նույն տեղը, 1977, № 6:

¹⁴ Стѣс **Здравомыслов Б. В.** Должностные преступления. Понятие и квалификация. М., 1975, тѣс 155:

¹⁵ Стѣс **Пинаев А.** Ответственность за соучастие в даче взятки // «Советская юстиция», 1972, № 21, тѣс 26:

¹⁶ Стѣс նույն տեղը, тѣс 26-27:

ված լինի **միասնական** հանցավոր արդյունքին¹⁷ (ընդգծումը մերն է - Մ. Մ.), մինչդեռ «կարծեցյալ միջնորդության» դեպքում անձանց գործողությունների ուղղվածությունը տարբեր է: Միջնորդի և կաշառք տվողի հետապնդած ցանկալի արդյունքները չեն համընկնում. կաշառք տվողը նպատակ է հետապնդում կաշառքի միջոցով բավարարել իր ապօրինի շահերը, իսկ «կարծեցյալ միջնորդը»՝ խաբեության միջոցով նյութական օգուտ քաղել դրանից: «Կարծեցյալ միջնորդը» ոչ միայն չի նպաստում կաշառք տալուն, այլև հենց նրա գործողությունների հետևանքով կաշառք տվողի հանցանքը խափանվում է և ավարտին չի հասցվում:

Նույն հիմնավորմամբ կաշառք տալու դրդչություն չեն կարող որակվել նաև առաջինից երրորդ տարբերակներում նկարագրված արարքները:

Այսպիսով, կաշառք ստանալու կամ կաշառքի միջնորդության պատրվակով կաշառքի առարկան խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ստանալու քրեականացումը թույլատրելի է, քանի որ այն չի հանգեցնում արդեն իսկ սահմանված քրեաիրավական արգելքների կրկնօրինակմանը: Քրեականացման թույլատրելիությունը հիմնավորվում է նաև նրանով, որ քրեականացվող արարքների՝ ընդունվելիք նորմում ամրագրվող էական հատկանիշները չեն առաջացնի իրավական անորոշություն, և դրանց կոնկրետացման աստիճանը բավարար է քրեաիրավական արգելքի սահմանների մասին պատկերացում կազմելու համար: Քրեականացվող արարքների հատկանիշներն արդեն իսկ օգտագործված են ՀՀ քրեական օրենսգրքում:

Ընդունվելիք քրեաիրավական նորմի իրացման հնարավորությունը հիմնավորվում է նրանով, որ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ապացույցներով (ցուցմունքներ, փորձագետի եզրակացություն, իրեղեն ապացույցներ) հնարավոր կլինի հաստատել հանցակազմի համապատասխան հատկանիշների (հանցագործության առարկա, եղանակ, մեղք, շարժառիթ) առկայությունը:

Այսպիսով, ելնելով կատարված ուսումնասիրության արդյունքներից, առաջարկում ենք՝

1) ուժը կորցրած ճանաչել քր. օր.-ի 178 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը:

2) Քր. օր.-ը լրացնել 200.1 հոդվածով, հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 200.1. Առևտրային կաշառքի պատրվակով դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը

Առևտրային կաշառք ստանալու կամ դրա միջնորդության պատրվակով դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով՝

պատժվում է...»:

3) Քր. օր.-ը լրացնել 311.3 հոդվածով, հետևյալ խմբագրությամբ՝

¹⁷ Տե՛ս **Иванов Н. Г.** Понятие и формы соучастия в советском уголовном праве. Саратов, 1991, էջ 53:

«Հոդված 311.3. Կաշառքի, ապօրինի վարձատրության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելու պատրվակով դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը

1. Կաշառք կամ ապօրինի վարձատրություն ստանալու կամ դրանց միջնորդության պատրվակով դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով՝

պատժվում է ...:

2. Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից՝

պատժվում է ...

3. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելու պատրվակով դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը՝

պատժվում է...»:

МИСАК МАРКОСЯН – Мошенничество под предлогом получения взятки: законодательная реформа или правовой тупик? – В результате дополнений к Уголовному кодексу РА мошенничество, совершенное под предлогом получения взятки, рассматривается в качестве квалифицированного вида мошенничества. В статье доказывается, что получение предмета взятки путем обмана или злоупотребления доверием, не может квалифицироваться как мошенничество. При такой квалификации правоприменитель оказывается в тупике относительно вопроса, должен ли предмет взятки быть возвращен лицу, давшему его.

Проблема рассмотрена в статье с уголовно-правовой и уголовно-процессуальной точек зрения. При получении предмета взятки путем обмана или злоупотребления доверием изначально отсутствует состав мошенничества, в частности, объект преступления. В статье обосновывается потребность и допустимость криминализации названного деяния и выдвигаются конкретные предложения по этому поводу.

MISAK MARKOSYAN – Fraud under the Pretext of Taking a Bribe: Legislative Reform or Legal Dead-End? –The article discusses the features of fraud under the pretext of taking a bribe. This crime is a qualitative type of fraud and it was introduced to the Criminal Code of the Republic of Armenia by an amendment of 30. 04. 08.

The author presents the approaches expressed in the official commentaries to the criminal legislation as well as in theory in regard to the fraud under the pretext of bribetaking and suggests that taking a bribe through deceit or confidence abuse can not be qualified as a fraud. According to the author, in the latter case the law enforcement body enters a legal dead-end when trying to answer the question whether the "bribe" must be returned to the "bribegiver" or not.

Discussing the issue from the criminal-legal and criminal-procedural points of view, the author concludes that in case of fraud with bribe taking pretext *corpus delicti* of fraud, in particular, the crime object, is initially absent. The author justifies the need and legal permissibility of criminalization of bribetaking and mediation through deceit or confidence abuse.

In the final part of the article the author presents the possible amendments to the RA criminal code with regard to the criminalization of bribetaking and mediation through deceit or confidence abuse.